ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Ցեղասպանությունը՝ զենոցիդը, մարդկության դեմ ուղղված ամենածանր հանցագործությունն է: Այդ արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է լեհ իրավաբան, դոկտոր Ռ. Լեմկինը 1944 թ.: Դեռեւս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1946 թ. դեկտեմբերի 11-ի հատուկ բանաձեւով եւ 1948 թ. Կոնվենցիայով այն որակվեց հանցագործություն մարդկության եւ քաղաքակրթության դեմ, որն իր հետ բերում է ոչ միայն ֆիզիկական, այլեւ ազգային լեզվի եւ մշակույթի ոչնչացում:

Օսմանյան Թուրքիան համարվում է ցեղասպանության հիմնադիր պետություն: Ցեղասպանության քաղաքականության ուղենիշ հանդիսացան օսմանյան մեծ վեզիրների՝ Ֆուադի քաղաքական կտակը, Ջյամիլի 1879 թ. նամակը սուլթանին եւ Սայիդի հռչակած կարգախոսը՝ «Հայկական հարցը լուծելու համար հարկ է ոչնչացնել հայերին»: Այն գործողության մեջ դրեց Աբդուլ Համիդը, իսկ շարունակեցին, ավելի դաժան ձեւերով, երիտթուրքերը, ապա՝ քեմալականները:

Երիտթուրքերի ազգայնամոլ կուսակցությունը, որն իշխանության գլուխ անցավ 1908 թ., Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1915-1916 թթ., իրագործեց Հայոց ցեղասպանության հրեշավոր ծրագիրը՝ փորձելով պատերազմի բոցերի մեջ այրել Հայկական հարցը: Սարսափելի ոճրագործությանը զոհ գնաց 1,5 միլիոն մարդ: Այն ցնցեց ամբողջ առաջավոր մարդկությանը եւ դարձավ Ի. դարի ամենադաժան ու աննախադեպ ոճրագործությունը, հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջը, կատարված փաստ, եղելություն, ինչը փորձում են ժխտել պատմության կեղծարարները:

Սակայն տարաբնույթ բազմաթիվ աղբյուրները, տարբեր երկրների դիվանագիտական արխիվներում հայտնաբերված փաստաթղթերը, հրաշքով փրկված ականատեսների վկայությունները եւ բազմաթիվ այլ աղբյուրներ գալիս են հաստատելու Հայոց ցեղասպանության անժխտելի իրողությունը:

Պահպանելով իր պատմաքաղաքական կարեւորությունը՝ հիմնահարցը մշտապես գտնվել է պատմագիտական մտքի ուշադրության կենտրոնում: Ստեղծված հսկայածավալ գրականությունը նպատակ ունի հանրությանը ներկայացնել ցեղասպանության իրական պատմությունը: Այն արդիական հնչեղություն է ստանում նաեւ այսօր, երբ դրական տեղաշարժեր են նկատվում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում:

Սակայն նկատենք, որ մինչխորհրդային ժամանակաշրջանն ըստ էության հարուստ չէ Հայոց ցեղասպանության լուսաբանմանը նվիրված ուսումնասիրություններով: Դրանցից կարելի է հիշել Մեծ Եղեռնի ականատես Մուշեղ Արքեպիսկոպո-

սի հուշագրություն-ուսումնասիրությունը[1], Ա-Դոյի[2], Ա. Անտոնյանի[3], Բ. Իշխանյանի[4], Ս. Բյուրատի[5], Ս. Ակունու[6], Ա. Չոպանյանի[7] եւ ուրիշների աշխատությունները:

Հայոց ցեղասպանության հիմնահարցի ուսումնասիրումը խորհրդային ժամանակներում հայտնի պատճառներով երկար ժամանակ լռության էր մատնվել: Միայն 1960-ական թվականները շրջադարձային եղան հիմնահարցի ուսումնասիրման եւ լուսաբանման համար: 1965 թ. լրացավ Մեծ Եղեռնի 50 տարին: Կեսդարյա լռությունից հետո առաջին անգամ հնչեց այդ մեծ ողբերգության մասին: Հայ ժողովուրդը նշեց խեղված ճակատագրերի եւ անմեղ զոհերի սրբացած հիշատակը: Սառույցը հալվեց, Խորհրդային Հայաստանում սկսվեց ազգային զարթոնքը. խորհրդահայ պատմաբանները հանդես եկան Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ առաջին ուսումնասիրություններով[8]:

Հետագայում լույս տեսան Հայոց Մեծ Եղեռնի պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ, որոնք հարստացրին ինչպես հայրենական, այնպես էլ սփյուռքահայ պատմագիտությունը[9]: Արժանին հատուցելով մեր բոլոր պատմաբաններին, նշենք, որ նման շնորհակալ աշխատանք է կատարել պրոֆեսոր Մ. Կարապետյանը[10]: Նա բազմակողմանիորեն պատմաքննական

1 Տե՛ս **Մուշեղ Արքեպիսկոպոս**, Հայկական մղձավանջը (քննական վերլուծումներ), Բոստոն, 1916:

2 Տե՛ս **Ա-Դօ**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թւականներին, Երեւան, 1917:

3 Տե՛ս **Ա. Անտոնյան**, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալեաթ փաշա, Բոստոն, 1921:

4 Տե՛ս **Բ. Իշխանյան**, Աղեստի եւ գառասպանքի աշխարհից: Այց թուրքահայ փախստականներին, Թիֆլիս, 1915:

5 Տե՛ս **Ս. Բիւրատ**, Արեւելեան խնդիրը եւ հայկական հարց: Պատմական ուսումնասիրութիւն, Կ. Պոլիս, 1919:

6 Տե՛ս **Ս. Ակունի**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920:

7 Տե՛ս **Ա. Չոպանեան**, Հայաստանը թուրք լուծին տակ՝ 25 մայիսի 1915, Բոստոն, 1918:

8 Տե՛ս **Մ. Ներսիսյան**, Նյութեր հայկական կոտորածների մասին (Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ). ՊԲՀ, 1965, թ. 1. **Մ. Ներսիսյան, Ն. Ուշակով**, Գենոցիդը ամենածանր հանցագործություն է մարդկության հանդեպ. «Սովետական Հայաստան», 1965, 25 ապրիլի, թ. 97. **Ե. Սարգսյան**, Թուրքիան եւ նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երեւան, 1964. **Ա. Մնացականյան**, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս եւ համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երեւան, 1965. **Ջ. Կիրակոսյան**, Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը 1914-1916 թթ., Երեւան, 1965. **Մ. Արզումանյան**, Հայաստան 1914-1917, Երեւան, 1969 եւ այլն:

9 Տե՛ս **Ջ. Կիրակոսյան**, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Երեւան, 1982, գիրք երկրորդ, 1983. **Ա. Համբարյան**, Արեւմտահայերի 1915 թ. կոտորածները եւ ինքնապաշտպանական մարտերը, Երեւան, 1990. **Ա. Համբարյան, Ս. Ստեփանյան**, Հայոց ցեղասպանությունը, Երեւան, 1995. **Ռ. Գ. Սահակյան**, Ցեղասպանության պատմությունից, Երեւան, 1990. **Ռ. Սահակյան, Կ. Խուդավերդյան**, Հայոց ցեղասպանությունը դասամյակների լույսի ներքո, Երեւան, 1995. **Ռ. Սահակյան**, Արեւմտահայության ցեղասպանությունը եւ ինքնապաշտպանական կռիվները 1915 թ., Երեւան, 2005. **Հր. Սիմոնյան**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երեւան, 1991. **Վ. Տարբեան**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով. «Դայքար», ԱՄՆ, 1995. նույնի՝ «Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները. Աղավաղման եւ կեղծարարության ուսումնասիրություն», թարգմ.՝ Լ. Թութխալյանի, Երեւան, 2005. նույնի՝ История Армянского геноцида (этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа)'', Ереван, 2007 եւ այլն:

10 **Մ. Կարապետյան**, Հայոց Մեծ Եղեռնը պատմագրության մեջ, Երեւան, 1993. նույնի՝ «Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ», Երեւան, 1998. նույնի՝ «Հայոց 1915-

վերլուծության է ենթարկել հայ պատմաբանների հայեցակարգային դրույթները 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության հիմնախնդրի վերաբերյալ:

Ավելի ուշ՝ Մ. Կարապետյան, Է. Գեւորգյան, Է. Մելքոնյան, Ա. Արզարյան հեղինակային խումբը լույս ընծայեց մի ամփոփ ուսումնասիրություն, որտեղ լայնորեն արծարծված են Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայրենիքում եւ սփյուռքում հրատարակված գիտական հետազոտությունները[11]:

Խորհրդային ժամանակների՝ վերեւից պարտադրված գաղափարախոսության պայմաններում Հայոց ցեղասպանության պատմության ճշմարիտ պատկերը լուսաբանելու եւ այն բարձրաձայն հնչեցնելու առաջին իրավունքը պատկանում է ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանին:

«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ» ծավալուն մենագրության մեջ նա հնչեցրեց նաեւ Հայոց ցեղասպանության հարցը՝ իրավացիորեն եզրակացնելով. «Նույն արեւմտյան պետությունների «չեզոքության» եւ հովանավորող քաղաքականության պայմաններում թյուրքական ջարդարարները կազմակերպեցին հայ բնակչության մասսայական կոտորածներ 1909 թ. Ադանայում եւ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամբողջ Արեւմտյան Հայաստանում ու Թյուրքիայում: Այդ տարիներին Իթթիհատի դահիճները սրի քաշեցին մեկ միլիոն մարդ: Ինքնին հասկանալի է, որ հայ ժողովրդի այս մասսայական ջարդերի համար քիչ հանցանք չունեն նշված պետությունները, որոնք հանդես եկան հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման դեմ»[12]:

Դեռեւս 1955 թ. հրատարակած իր ուսումնասիրություններից մեկում Մ. Ներսիսյանն անդրադարձել է Հայոց ցեղասպանության հարցին[13]: Նա Հայաստանի պատմական արխիվում եւ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվի պրոֆ. Լեոյի ֆոնդում հայտնաբերեց թվով ինն արժեքավոր փաստաթղթեր եւ 1965 թ. հրատարակեց «Նյութեր հայկական կոտորածների մասին» խորագրով[14]:

Նախնական խոսքում Մ. Ներսիսյանը ներկայացնում է ԺԹ. դարի վերջերին Թուրքիայում տեղի ունեցած հայկական զանգվածային կոտորածները: Սակայն երիտթուրքերի կուսակցությունը, չցանկանալով լսել անգամ ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին, նախապատրաստեց նոր, ավելի դաժան հան-

1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ», Երեւան, 2005:

11 Տե՛ս **Մ. Կարապետյան, Է. Գեւորգյան, Է. Մելքոնյան, Ա. Արզարյան**, Հայոց Մեծ Եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երեւան, 2010:

12 Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 818, ց. 1, գ. 134, թ. 97. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երեւան, 1955, էջ 339:

13 Տե՛ս **Մ. Ներսիսյան**, Արեւմտահայերի մասսայական կոտորածները 1915-1916 թվականներին. ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, թ. 5, էջ 50-53:

14 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 2-9, նաեւ գ. 343, թ. 1-8, նաեւ գ. 504, թ. 10-16, նաեւ գ. 621, թ. 54-61. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Նյութեր հայկական կոտորածների մասին (Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ). ՊԲՀ, 1965, թ. 1, էջ 85-100. նույնի՝ «Հայ ժողովրդի նոր պատմության էջերից», Երեւան, 1982, էջ 352-373:

ցագործություն, որպեսզի վերջ դրա Հայկական հարցին, ոչնչացնի հայ ժողովրդին: «Այդ զարհուրելի ծրագիրը, - գրում է նա, - թուրքական կառավարությունն ամենայն բարբարոսությամբ իրականացրեց առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Ջարդերը սկսվեցին դեռևս 1914 թ. վերջերին... Հայկական կոտորածները, որ առանձնապես ծավալվեցին 1915 թ., շարունակվեցին հետագա տարիներին Միջագետք եւ կայսրության մյուս անկյուններն աքսորված հայ բնակչության նկատմամբ: Ջարդեր տեղի ունեցան Արեւմտյան Հայաստանի բոլոր մասերում, Թուրքիայի բոլոր հայաբնակ վայրերում»[15]:

Հրապարակված առաջին երկու փաստաթղթերն արեւմտահայերի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունու՝ Կ. Պոլսից ուղարկված նամակներն են Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցին:

1912 թ. սեպտեմբերի 4-ին գրած իր առաջին նամակում պատրիարքը խոր հիասթափություն է հայտնում 1908 թ. օսմանյան սահմանադրության վերաբերյալ, որի հոչակումից հետո հայերի վիճակը ոչ միայն չփոխվեց, այլեւ Ադանայի ահավոր կոտորածով սկսվեց չարագործությունների նոր շրջան, որն ավելի վատթարացրեց հայերի վիճակը: Այնուհետեւ Հովհ. արք. Արշարունին հայտնում է, որ այդ մասին բազմիցս տեղեկացրել են Բ. Դռանը, սակայն «...ի պատասխան Մուշէն, Բաղեշէն եւ Սղերդէն գուժաբեր հեռագրեր հասան մեզ նոր ի նորոյ ծանուցանող, թէ ոչ մէկ գործադրութիւն տեղի չէ ունեցած, թէ վիճակն կշարունակէ եւ թէ ժողովուրդն մատնուած է նոյնիսկ ընդհանուր կոտորածի վտանգին...»[16]:

Փաստորեն Հայոց ցեղասպանության ուրվականը շրջում էր դեռեւս Առաջին համաշխարհային պատերազմից առաջ: Այդ է վկայում նաեւ պատրիարքի 1913 թ. մայիսի 24-ի թվակիր նամակը դարձյալ Գեւորգ Ե. Սուրենյանցին: Այնտեղ գրված է. «Գաւառական առաջնորդարանէ հասած տեղեկութիւններէ իրազեկ լինելով, որ հայ ժողովրդեանս վիճակը հետզհետէ կվատթարանայ եւ հայկական կոտորածի մը վերահաս վտանգին տակ կգտնուի... Հայաստանը կուզէ պարպել հայ ժողովուրդէն...»[17]:

Երրորդ եւ չորրորդ փաստաթղթերը 1914 թ. սեպտեմբերի 20-ի եւ հոկտեմբերի 11-ի Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսի գաղտնի հեռագրերն են՝ ուղարկված Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովին: Դրանցում Մ. Գիրսն ահազանգում է թուրքական կառավարության կողմից մահմեդական ավազակախմբերին զինելու եւ հայկական ջարդեր նախապատրաստելու մասին, որ հայերը խուճապի մեջ են, փախչում են Ռուսաստանի սահմանները՝ կոտորածից փրկվելու համար, ինչը նրանց սպասում էր[18]:

15 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 91, 119, 130. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 352:

16 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 2, նաեւ գ. 343, թ. 1, նաեւ գ. 504, թ. 10, նաեւ գ. 621, թ. 54. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 354:

17 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 3, նաեւ գ. 343, թ. 2, նաեւ գ. 504, թ. 11, նաեւ գ. 621, թ. 55. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 355:

18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 4, նաեւ գ. 343, թ. 2-3, նաեւ գ. 504, թ. 11, նաեւ գ. 621, թ. 55. **Մ. Ներսիսյան**,

1915 թ. ապրիլի 7-ի թվակիր հեռագրում (փաստաթուղթ 5) Էջմիածնից Գեւորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոսը Ս. Սազոնովին հայտնում էր, թե հավատի աղբյուրները տեղեկացնում են, որ Էրզրումում, Դերջանում, Զեյթունում տեղի են ունենում կոտորածներ: Արյունահեղություն է Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություն, կողոպուտ, սպանություններ են կատարվում անզեն, անպաշտպան հայերի նկատմամբ: Նա ուղղակի խնդրում էր ճակատագրական այդ պահին օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին[19]:

Հաջորդ փաստաթղթերն արդեն վկայում են բուն Եղեռնի իրականացումը: Այսպես՝ 1915 թ. մայիսի 28-ի թվակիր նամակում Մանազկերտի առաջնորդի փոխանորդ Հովհաննես քահանա Տեր-Ավետիսյանի՝ Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցին ուղարկած նամակում (փաստաթուղթ 6) արդեն վիճակագրական տվյալներ են բերվում ցեղասպանության մասին[20]:

Հետաքրքիր է նաեւ 7-րդ փաստաթուղթը՝ արեւմտահայերի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի՝ 1915 թ. դեկտեմբերի 28-ի նամակը՝ ուղարկված ամերիկահայերի հոգեւոր առաջնորդ, ծայրագույն վարդապետ Վեհունուն: Նամակագիրը տեղեկացնում է ամերիկահայերին, որպեսզի նրանք իմանան այն ահռելի եղեռնի մասին, որ տեղի էր ունենում Թուրքիայում. «Պատմութիւնը չեմ կարծեր թէ արձանագրած ըլլայ այսպիսի կոտորած մը... Այս անգամ գործադրուածը իսկապէս բնաջնջումի ծրագիր մըն է..., եւ արդէն կուսակալներէն ոմանք հեռագրեցին Կենտ. կառավարութեան, թէ իրենց կառավարած նահանգներուն մէջ ***ոչ մէկ հայ կը գտնուի այլեւս***»[21] (ընդգծումը նամակագրինն է - Է. Մ.):

Փաստորեն այս անգամ խուժանը չի հարձակվել խաղաղ ու անպաշտպան ժողովրդի վրա, այլ դա տեղի է ունեցել կառավարության մշակած ծրագրի հիման վրա՝ զինվորների, ոստիկանների, ժանդարմների եւ հրոսակախմբերի միջոցով: Հրահանգը տրվել է կենտրոնից, կատարվել ամենայն դաժանությամբ՝ առանց խղճի ու պատասխանատվության:

Նամակագիրը, շարունակելով իր միտքը, տեղեկացնում է, որ այն առավել սարսափելի էր Մուշում, Բաղեշում, Տիգրանակերտում, Եդեսիայում, Տրապիզոնում, Շապին-Գարահիսարում, Քղիում, Բալուում, Երզնկա-Քեմախում, որտեղ գրեթե ոչ մի հայ չի փրկվել: Հայաստանի մյուս նահանգներում փրկվածները հազիվ 5 տոկոս են կազմում: «Լեռներ ու բանուկ ճամբաներ դիակներով լեցուեցան, - շարունակում է նամակագիրը, - գետերը օրերով դիակներ տարին

Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 356:

19 Տեմ ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 4, նաեւ գ. 343, թ. 5, նաեւ գ. 504, թ. 12, նաեւ գ. 621, թ. 56. **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 356-357:

20 Տեմ ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 5, նաեւ գ. 343, թ. 5, նաեւ գ. 504, թ. 13, նաեւ գ. 621, թ. 55-56. **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 357-359:

21 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1,, գ. 253, թ. 28, նաեւ գ. 255, թ. 6, 14, 23, նաեւ գ. 254, թ. 29-30, 85, 108-109, 127, նաեւ գ. 343, թ. 6, նաեւ գ. 504, թ. 14, նաեւ գ. 621, թ. 56. տեմ նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 360. նույնի՝ «XX դարի առաջին ցեղասպանությունը». «Գիտություն», 1996, 24 ապրիլի, թ. 7:

իրենց ալիքներուն հետ...»[22]: Ապա ավելացնում է, որ մարդկային պատմությունը նման գազանային դեպքեր չի արձանագրել նույնիսկ նախաքրիստոնեական ժամանակներում:

Նամակը փաստում է նաեւ հազարավոր հայ զինվորների կոտորածի եւ մահվան սպառնալիքով իսլամացած լինելու հանգամանքը: Վանքերն ու եկեղեցիները կործանվեցին, իսկ հոգեւորականությունը գրեթե ամբողջովին կոտորվեց: Նա նշում է նրանց եւ եւս 18 բարձրաստիճան հոգեւորականի անուն, ովքեր զոհ գնացին այդ եղեռնագործությանը: Զավեն արքեպիսկոպոսը, ամփոփելով զոհերի թիվը, նշում է, որ այն պակաս չէ մեկ միլիոնից:

Հետաքրքիր դիտարկումներ է պարունակում 8-րդ փաստաթուղթը: Այն ռուսական բանակի շտաբս-կապիտան Գրիմ Շամխալչիի՝ 1916 թ. փետրվարի 14-ին Մուշից ուղարկված զեկուցագիրն է Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարին: Իրարից անկախ հարցաքննված հայերի եւ թուրքերի ցուցմունքների հիման վրա հավաստի տեղեկությունները վկայում են, որ պատերազմի նախօրեին տեղի հայերը դիմել են Կ. Պոլսի հայոց պատրիարքարան՝ պատերազմի դեպքում իրենց վարքագիծը ճշտելու վերաբերյալ: Պատասխանը եղել է այն, որ նրանք պարտավոր են ենթարկվել իրենց միապետի կամքին, որից հետո ինքնակամ զինվորագրվել են թուրքական բանակի շարքերը: 1915 թ. սեպտեմբերի կեսերին գերմանական սպաներն Էրզրումում թուրքական զորքերի սպուգատես անցկացնելուց հետո հայ զինվորներից վերցրել են զենքը. պատճառն իբր քրիստոնյաների կողմից դավաճանության մտավախությունն էր: Հայերին ուղարկում էին աշխատանքային, գումակային այլ զորամասեր, եւ դրանից հետո հայերը սկսեցին զանգվածաբար դասալքել[23]:

Մինչդեռ տեղի է ունեցել հակառակը: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ հենց թուրքերն են դա արել: Ճիշտ է՝ հայ զինվորների մի ինչ-որ մաս դասալքել է, բայց դա զանգվածային բնույթ է ընդունել հենց թուրք զինվորների շրջանում: Կ. Շամխալչին գրում է նաեւ, որ Վանի կոտորածներն սկսելու ազդանշան դարձավ այն, որ Թուրքիայում լուրեր էին տարածվել, թե Վանը գրավել են հայերը, եւ հայ ժողովրդի երկու հատվածը՝ արեւելահայերն ու արեւմտահայերը կռվում են ռուսական զորքերի շարքերում, ինչի համար քրիստոնյաներին պետք է կոտորել: Դա տարածում էր թուրքական կառավարությունը:

Ռուսական բանակի սպան նկարագրում է կոտորածի արդեն սովորական դարձած եղանակը. «Փորվում էր մի մեծ փոս, նրա եզրերն էին քշվում կանայք եւ երեխաները, եւ մայրերին հարկադրում էին փոսը հրել իրենց երեխաներին, որից հետո մի քիչ հող էր լցվում, հետո կապկպված հայ տղամարդկանց աչքերի առջեւ բռնաբարվում եւ սպանվում էին կանայք, ապա վերջապես սպանվում էին

22 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 6, նաեւ գ. 343, թ. 6, նաեւ գ. 504, թ. 14, նաեւ գ. 621, թ. 57. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 361:

23 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 7, նաեւ գ. 343, թ. 7, նաեւ գ. 504, թ. 14, նաեւ գ. 621, թ. 58. **Մ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 366:

տղամարդիկ, եւ փոսը գրեթե լցվում էր դիակներով: Քրիստոնյաների մի մասին կամուրջներից գցում էին գետը: Մուշի մոտ Եփրատ գետը թափվեց 25 հազար դիակ...»[24]:

Ռուսական բանակի շտաբս-կապիտանի մեկ այլ վկայությամբ՝ իբր թե մահմեդական հոգեւորականությունը՝ հանձին Մուշ քաղաքի իմամ շեյխ Ավիս Կադիրի, բողոքել է տեղի ունեցած ոճրագործությունների դեմ: Նա անձամբ դիմել է մյութեսարիֆ Սարվաթ-բեկին՝ խնդրելով հարգել Մուհամմեդի օրենքը, որը թույլատրում է սպանել միայն զենք կրելու ընդունակ 15-60 տարեկան տղամարդկանց: Պատասխանը եղել է ձերբակալվելու սպառնալիքը: Արդյունքում քաղաքի իշխանությունների եւ հոգեւորականության միջեւ թշնամանք է սկսվել: Վերջինս թաքցնելով հայերին իշխանություններից՝ ենթարկվում էր նրանց վիրավորանքներին ու հալածանքներին: Կ. Շամխալչին ավելացնում է. «Հայերի ցուցմունքների համաձայն՝ առհասարակ ողջ հոգեւորականությունը, առանց բացառության, պաշտպանել է իրենց»[25]:

Արդյոք չափազանցված չե՞ն թուրք հոգեւորականության մարդասիրական զգացումները... Գուցե մասնավոր դեպքեր եղել են, սակայն դա մի կաթիլ էր օվկիանոսի մեջ. ճշմարտությունն այն է, որ հենց թուրք մոլեռանդ հոգեւորականությունն էր Հայոց ցեղասպանության իրականացման կազմակերպիչներից ու ոգեշնչողներից մեկը:

«Ամատունի» ստորագրությամբ՝ Թիֆլիսի Ազգային բյուրոյին 1916 թ. ներկայացված 9-րդ փաստաթղթի մեջ համառոտ տեղեկություններ են հաղորդվում հայկական նահանգներում կատարված իրադարձությունների վերաբերյալ: Հեղինակը խոսում է հայերի ինքնապաշտպանական մարտերի մասին բռնությունների եւ տեղահանությունների ժամանակ, որոնք տեղի ունեցան Տիգրանակերտում, Մարզվանում, Շապին-Գարահիսարում, Զեյթունում, Սուեդիայում, Չինկիլիում եւ Պանդրմայում: Նրա հաշվարկներով այդ սպանդից հետո ողջ է մնացել մոտ 530 հազար արեւմտահայ[26]:

«Այս ինն արխիվային փաստաթղթերում նկարագրվում է արեւմտահայերի ծանր դրությունը 1912-1914 թթ. եւ նրանց զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից 1915-1916 թթ.: Այդ նյութերի հեղինակների մեծ մասը համարվում են Արեւմտյան Հայաստանում եւ ամբողջ Թուրքիայում կատարված արյունալի դեպքերի վկաները», - եզրակացնում է Մ. Ներսիսյանը[27]:

Այս արժեքավոր նյութերի հրապարակմամբ Մ. Ներսիսյանի ղեկավարությամբ հանրապետությունում հիմք դրվեց Հայոց Մեծ Եղեռնի վերաբերյալ

24 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 8, նաեւ գ. 343, թ. 7, նաեւ գ. 504, թ. 14, նաեւ գ. 621, թ. 58. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 367:

25 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 8, նաեւ գ. 343, թ. 7, նաեւ գ. 504, թ. 14, նաեւ գ. 621, թ. 59. տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, էջ 367:

26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 8, նաեւ գ. 343, թ. 7, նաեւ գ. 504, թ. 15, նաեւ գ. 621, թ. 59-61. **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 373:

27 **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 373:

արխիվային փաստաթղթերի հավաքման ու մշակման մեծ եւ կարեւոր աշխատանքին: Վերոհիշյալ փաստաթղթերը դարձան այն անկյունաքարը, որի վրա 1966 թ. բարձրացավ Մ. Ներսիսյանի առաջաբանով եւ խմբագրությամբ հրատարակված, երկարատեւ որոնումների արդյունք հանդիսացող մեծարժեք, անկրկնելի ու ծավալուն ժողովածուն[28]՝ որպես մնայուն պատմական փարեգրություն Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այն կազմել են Մ. Ներսիսյանը եւ Ռ. Սահակյանը: Հրատարակության նախապատրաստելու աշխատանքներին մասնակցել են Ն. Դերոյանը եւ Դ. Մուրադյանը: 1982 թ. լույս տեսավ ժողովածուի երկրորդ՝ լրացված հրատարակությունը, իսկ 1991 թ. այն հրատարակվեց հայերեն թարգմանությամբ[29]:

700 եւ ավելի էջից կազմված այս ժողովածուն բաղկացած է երկու մասից: Նկատենք, որ Մ. Ներսիսյանը հիմնավորում է այն դրույթը, որ Մեծ Եղեռնի մասին խոսելիս պետք է հաշվի առնել ոչ միայն 1915-1916 թթ. զանգվածային կոտորածները, այլեւ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարի սկզբին տեղի ունեցած ջարդերը: Այդ նպատակով ժողովածուի առաջին մասում (էջ 1-228) տեղ են գտել սուլթան Աբդուլ Համիդի օրոք (1876-1908 թթ.) հայերի կոտորածներին վերաբերող նյութերը: Ժողովածուի երկրորդ մասը (էջ 229-719) ավելի ընդարձակ է եւ կրում է «Հայերի զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909-1918 թթ.)» վերնագիրը:

Դրանք Աբդուլ Համիդի եւ երիտթուրքերի վարած վայրենի քաղաքականությունը մերկացնող նյութեր են, Հայոց ցեղասպանությունը հաստատող աղաղակող փաստաթղթեր: Դրանով հիմք դրվեց Հայոց Մեծ Եղեռնի գիտական հետազոտության սկզբնավորմանը: Այն մեծ հետաքրքրություն առաջացրեց նաեւ օտարազգի ընթերցողների շրջանում:

Տարբեր արխիվներից հայտնաբերված նյութերի հիման վրա ժողովածուն փաստերի անողոք լեզվով անարգանքի սյունին է գամում արեւմտահայության համատարած ջարդի կազմակերպողներին եւ նրանց արեւմտյան հովանավորներին: Ժողովածուում ընդգրկված նյութերն ապացուցում են, որ թուրքական սուրը տարբերություն չէր դնում ընկերային խավերի միջեւ, անխնա կոտորում էր հայերին: Կարեւոր են այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հայերի հերոսական դիմադրությանը, արտահայտում համաշխարհային առաջադեմ հասարակության կարծիքը հայերի ցեղասպանության նկատմամբ:

Մ. Ներսիսյանը գրքի նախաբանում բացահայտում է թուրք ջարդարարների կազմակերպած ցեղասպանության դրդապատճառները եւ մեծ տերությունների

28 Տե՛ս ՝Геноцид армян в Османской империи՞՝. Сборник документов и материалов, под ред. М. Нерсисяна, сост. М. Нерсисян, Р. Саакян, Ереван, 1966:

29 Տե՛ս ՝Геноцид армян в Османской империи՞՝. Сборник документов и материалов, под ред. М. Нерсисяна, 2-ое доп. издание, сост. М. Нерсисян, Р. Саакян, Ереван, 1982. «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում». Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, կազմ.՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երեւան, 1991:

հանցավոր անտարբերությունը իրադարձության հանդեպ, այդ հենքի վրա ներկայացնելով իր մոտեցումները՝ կատարում է ընդհանրացումներ եւ տալիս ուղենշային գնահատականներ:

Նա միաժամանակ քննադատական վերաբերմունք է դրսեւորում փաստաթղթերում տեղ գտած որոշ անճշտությունների վերաբերյալ: Ըստ Մ. Ներսիսյանի՝ մի շարք նյութերում գերագնահատված է մահմեդական խաժամուժի եւ քրդական ցեղերի դերն ու նշանակությունը, երբ խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանության պատճառներին: Ըստ պատմության կեղծարարների՝ Հայոց Մեծ Եղեռնի հիմնական պատճառը եղել է 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների հակաօսմանյան գործունեությունը եւ Վանի 1915թ. ապստամբությունը: Մ. Ներսիսյանը, մերժելով այս անհիմն պատճառաբանությունը, շեշտում է, որ Վանի ապստամբությունն ինքնապաշտպանություն էր, հայերը ստիպված էին դուրս գալ տիրող կարգերի դեմ, եւ ավելացնում է, որ մեծ ոճիրի պատճառը թուրք ազգայնամոլների ծրագրերն էին՝ մշակված դեռեւս 1910-1911 թթ. Սալոնիկում կայացած գաղտնի ժողովներում: Մի՞թե հայտնի չէ, որ կոտորածների կազմակերպիչը թուրքական կառավարությունն էր, որի նպատակն էր ոչնչացնել հայությանն իր իսկ հայրենիքում: Թուրքական կառավարող շրջանները, իհարկե, քրդական տարրերին հրահրել են հայերի դեմ, բայց ցեղասպանության ամբողջ պատասխանատվությունն ընկնում է սուլթան Աբդուլ Համիդի եւ երիտթուրքերի վրա,- իրավացիորեն ընդգծում է Մ. Ներսիսյանը[30]:

Պատմաբանի հավաստմամբ՝ փաստաթղթերի մեկ այլ խումբ կարող է թյուր պատկերացում ստեղծել, թե մեծ տերությունները մտահոգված էին Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններով եւ, իբր, միջոցառումներ են ձեռնարկել այն կասեցնելու համար, ինչը հեռու է ճշմարտությունից. իրականությունը հակառակն է ապացուցում:

Մ. Ներսիսյանը համամիտ չէ նաեւ որոշ փաստաթղթերում արտահայտված այն կարծիքին, թե հայերն այդ ոճրագործությանը հակահարված չեն տվել: Բազմաթիվ փաստեր վկայում են, թե ինչպես են հայերը զենքի դիմել՝ իրենց ազգային արժանապատվությունը փրկելու: Վկայակոչենք 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը: Բայց օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պայմաններն անհնարին են դարձրել հայերի նշանակալից հաջողությունը, քանզի ուժերն անհավասար էին, զենքի ընդունակ մարդիկ զորակոչվել էին բանակ եւ ոչնչացվել:

Հրապարակի վրա առկա գրականությունը, արխիվային հարուստ ու բազմաբովանդակ նյութերը, բազմաթիվ ուսումնասիրությունները, ջարդերից փրկված ականատեսների վկայությունները, նրանց հուշերն ու ցուցմունքները, տարբեր երկրներում հրատարակված գիտական աշխատությունները եւ ժողովածուում տեղ գտած տարբեր պետությունների հյուպատոսների, բարձրաստիճան պաշտոնյաների զեկուցագրերը, տեղեկագրերն ու նամակներն աղաղակում են Հայոց ցեղասպա-

30 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 33:

նության փաստը: «Սակայն, մեղմ ասած, - գրում է Մ. Ներսիսյանը, - զարմանք է պատճառում մի հանգամանք. ժամանակակից Թուրքիայի պաշտոնապար շատ անձինք եւ «մտավոր աշխատանքի» շատ ներկայացուցիչներ, անպատկառորեն ոտնակոխ անելով պատմական ճշմարտությունը, ձգտում են ժխտել Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած՝ հայերի ցեղասպանության փաստը: Զուր ջանքեր: Խայտառակ այդ փորձերը, սակայն, շինծու են եւ անհեթեթ»[31]:

Ժողովածուն ներառում է տարբեր երկրների արխիվային փաստաթղթեր: Մ. Ներսիսյանի խոսքերով՝ դրանք պաշտոնական զեկուցագրեր են, հաղորդումներ, դիմումներ՝ գրված տարբեր պետությունների ղեկավարների կողմից, ինչպես նաեւ հոգեւոր անձանց եւ միսիոներների տված ցուցումներ Թուրքիայում կատարված ահավոր սպանդի մասին, որտեղ ընթերցողը փաստերի առատության հենքի վրա տեսնում է հայ ժողովրդի այդ «սեւ օրերի» մղձավանջն ու ամբողջական պատկերը: Այն մի հարուստ ժառանգություն է, խոսուն վկա, որի յուրաքանչյուր տողն ասես շշնջում է՝ հիշեցնելով Ի. դարի ամենամեծ ողբերգությունը՝ Հայոց ցեղասպանությունը: Պատմաբանն անթաքույց կսկիծով պատգամում է գալիք սերունդներին՝ այն այլեւս չկրկնվելու ակնկալությամբ, որպեսզի աշխարհի ոչ մի ծայրում նման ոճրագործություններ չկատարվեն, եւ ոչ մի երկիր այլեւս իրավունք չունենա զոհասեղանին դնելու հայ ժողովրդի ճակատագիրը: Հայկական հարցը չպետք է մեծ պետությունների համար լինի մանրադրամ, փոքր ժողովուրդները եւս իրենց օրինական իրավունքն ունեն՝ դարեր շարունակ պետականությունը կորցնելուց հետո սեփական երկրի տերը դառնալու: Ահա այն հայրենասիրական եւ դաստիարակչական ներգործուն ուժը, որով պետք է տոգորված լինեն գալիք սերունդները՝ իրենց հիշողության եւ նախորքերում պահելով այն հեղված արյունը, ինչի կրկնության իրավունքն այլեւս ոչ ոք չունի:

Այսպիսով, Մ. Ներսիսյանը հիմք դրեց Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրությանը: Նրա խմբագրությամբ հրատարակված ժողովածուն, կարելի է ասել, Հայոց ցեղասպանությունը ներկայացնող փաստաթղթերի լայն համայնապատկեր է, անսպառ մի աղբյուր, որից սնվել են Հայոց ցեղասպանության պատմությունն ուսումնասիրողները: Ժողովածուում ամփոփված փաստաթղթերը պարունակում են ոչ միայն չարագործությունների նկարագրություններ, այլեւ հավաստի ու ճշմարտապատում վկայություններ, որոնք արժանի են ուշադրության: Այնտեղ փաստերը խոսուն են ու համոզիչ, տպավորիչ ու զայրացուցիչ, մարդկանց հիշողության մեջ՝ մնայուն ցավալի ողբերգություն ու տառապանք: Պատահական չէ, որ այդ հիմնախնդրով զբաղվողներից ոչ մեկը չի շրջանցել այն:

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

31 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Նախաբան, էջ XXIII: